ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ապահովագրված անձն իրավունք ունի՝
   - ապահովագրական ընկերությունից ստանալու տեղեկատվություն Ապահովագրության պայմանագրի՝ իրեն վերաբերող դրույթների, ծրագրում ներառված բժշկական կազմակերպությունների վերաբերյալ,
   - Ապահովագրության պայմանագրով սահմանված կարգով ստանալու Ապահովագրության պայմանագրով նախատեսված ծառայությունները,
   - Ապահովագրության պայմանագրին համապատասխան պահանջելու բժշկական օգնության և ծառայությունների տրամադրում՝ բժշկական կազմակերպություններից,
   - ապահովագրական ընկերության կողմից բժշկական ծառայության տրամադրումը մերժելու դեպքում՝ կայացված որոշումը վերանայելու և լրացուցիչ պարզաբանումներ ստանալու նպատակով ապահովագրական ընկերությանը ներկայացնելու ապահովագրական հատուցման դիմում: *(Հատուցման դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո ապահովագրական ընկերությունը պարտավոր է 10 (տասն) աշխատանքային օրվա ընթացքում ընդունել ապահովագրական հատուցման մասին գրավոր որոշում:)*
   - օգտվելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Ապահովագրության պայմանագրով նախատեսված այլ իրավունքներից:

2. Ապահովագրված անձը պարտավոր է՝
   - Ապահովագրության պայմանագրով նախատեսված ծառայություններից (բացառությամբ տարեկան կանխարգելիչ բժշկական քննության) օգտվելու համար դիմել բացառապես Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2018 թվականի հունիսի 13-ի N 1468-Ա հրամանով հաստատված ցանկում (Հավելված 5) ընդգրկված բժշկական կազմակերպություններ՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ (2019 թվականի ապրիլի 01-ից Բուժաշխատողները՝ նույնականացման քարտ),
   - Տարեկան կանխարգելիչ բժշկական քննությունից օգտվելու համար դիմել իր պոլիկլինիկա, որին կցագրված է: Ընդ որում, եթե կցագրված է գյուղական բնակավայրերում գործող բժշկական կազմակերպությանը (գյուղական բժշկական ամբուլատորիա, գյուղական

առողջության առաջնային պահպանման կենտրոն, գյուղական առողջության կենտրոն), ապա կանխարգելիչ բժշկական քննությունից օգտվելու համար դիմել տվյալ տարածաշրջանի ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնություն իրականացնող պոլիկլինիկա կամ բժշկական կենտրոն:

- ապահովագրական ընկերությանը տրամադրել իրավունք՝ ծանոթանալու իրեն վերաբերող բժշկական փաստաթղթերի, տեղեկությունների հետ, որոնք անհրաժեշտ են Ապահովագրության պայմանագրի կատարման և ապահովագրական հատուցման որոշման կայացման համար,
- կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Ապահովագրության պայմանագրով նախատեսված այլ պարտավորություններ:

Ապահովագրական ընկերությունն իրավունք ունի մերժելու ապահովագրական հատուցման վճարումը, եթե Դուք չեք կատարել Ապահովագրության պայմանագրով սահմանված Ձեր պարտականությունները կամ խախտել եք Ապահովագրության պայմանագրով նախատեսված ծառայություններ ստանալու՝ Ապահովագրության պայմանագրով սահմանված կարգը, ժամկետները:

Ապահովագրական պատահարի մասին ուշ տեղեկանալու կամ չտեղեկանալու հիմքով ապահովագրական ընկերությունն իրավունք չունի մերժելու հատուցման վճարումը, եթե նա ժամանակին իմացել է ապահովագրական պատահարի վրա հասնելու մասին կամ, որ այդ մասին տեղեկությունների բացակայությունը չէր կարող ազդել ապահովագրական հատուցում վճարելու նրա պարտականության վրա: